ՕԾՎԵՑ ՎԱՆԱՁՈՐԻ Ս. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ԵԿԵՂԵՑԻՆ

Գուգարաց թեմում Սուրբ Խաչի Գյուղի փոնը նշանավորվեց Վանաձորի առաջնորդանիստ եկեղեցու օծմամբ: Հոկտեմբերի 23-ին, ձեռամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, օծվեց Վանաձորի Ս. Գրիգոր Նարեկացի նորակառույց եկեղեցին: 2002 թ. մայիսին Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից կատարվել էր այս եկեղեցու հողօրհնեքը, իսկ 2003 թ. հունիսին՝ հիմնարկեքը: Ի նշանավորումն 2003 թ. փոնախմբվող Ս. Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» աղոթագրքի 1000-ամյա հոբելյանի՝ եկեղեցին կոչվեց Ս. Գրիգոր Նարեկացու անվամբ: Եկեղեցին կառուցվել է շնորհիվ ամերիկաբնակ տեր և տիկ. Սարգիս և Հռութ Բեդևյանների ազնիվ բարերարության: Եկեղեցու նախագծի հեղինակն է ճարտարապետ Ռուբեն Ազատյանը:

Առաջնորդանիստ եկեղեցու առջև խմբված հավատացյալ ժողովրդի բազմությունը, Գուգարաց թեմի առաջնորդ Տ. Սեպուհ եպս. Չուլջյանի և հոգևոր դասի գլխավորությամբ, աղու հացով դիմավորեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին: «Հրաշափառ»-ի երգեցողության ներքո Նորին Սրբությունն առաջնորդվեց նորակառույց եկեղեցի, ուր կատարվեց եկեղեցու օծման արարողությունը:

Հայցելով Աստծո օրհնությունն ու հովանավորությունը՝ Հայոց Հայրապետը Սրբալույս Մյուռոնով օծեց եկեղեցու Սուրբ Սեղանը: Ձեռամբ թեմական առաջնորդի օծվեց Մկրտության ավազանը:

«Մենք այս օրվան երկու տարի առաջ էինք պատրաստվել, և օր ավուր մեր սիրտը տրոփում էր՝ սպասելով, թե երբ Ձերդ Սրբությունը Հայրապետական իր Սուրբ Աջով պետք է թակի դռները Ս. Գրիգոր Նարեկացի եկեղեցու, ներս մտնի և իր օրհնությամբ մեզ օրհնի»,- նշեց Սեպուհ Սրբազանը:

Ապա համախումբ հավատացյալ ժողովրդին իր Հայրապետական խոսքն ուղղեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

«Փառք և գոհություն ենք բարձրացնում առ Աստված, որ Տերն արժանացնում է Մեզ այսպիսի շնորհների. Հայոց ազատ ու անկախ հողի վրա հառնում են եկեղեցիներ, որպեսզի մեր ժողովրդի աղոթքով և մեր եկեղեցիների օրհնությամբ զորանա ու առաջընթաց ապրի ազատ մեր կյանքը»,- ասաց Հայոց Հայրապետը: Նորին Սրբությունն իր գնահատանքը, սերն ու օրհնությունը բերեց եկեղեցու ազնիվ բարերարներին, ովքեր մեր ժողովրդի ազգային եկեղեցական կյանքին իրենց նպաստն են բերել ինչպես հեռավոր ԱՄՆ-ում, այնպես և Հայրենիքում: Հայոց Հայրապետը տեղեկացրեց նաև, որ տեր և տիկ. Սարգիս և Հռութ Բեդևյանների բարերարությամբ ծրագրվում է եկեղեցուն կից հիմնել Հայորդյաց տուն, ինչպես նաև առողջապահական կենտրոն և բարեգործական ճաշարան:

Վեհափառ Հայրապետն իր բարձր գնահատանքը հայտնեց նաև թեմի բարեջան առաջնորդին և թեմի բոլոր հոգևոր սպասավորներին, ովքեր իրենց ծառայությունն են բերում

ԵԿԵՂԵՑՈՒ ՕԾՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՐՔԻՎ



ՎԱՆԱՁՈՐԻ ԱՌԱՔՆՈՐԴԱՆԻՍՏ Ս. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ
ՆՈՐԱՕԾ ԵԿԵՂԵՑԻՆ

դժվարին պայմաններում: Նորին Սրբությունն իր շնորհավորանքը ուղղեց նաև Վանաձորի բնակիչներին՝ հորդորելով հավատարիմ մնալ իրենց հայրերի հոգևոր արժեքներին: «*Առավել չափով այս դարաշրջանում կրոնական դարբեր կազմակերպություններ ու աղանդներ հարձակվել են մեր հավատավոր հողի վրա և փորձում են ցրել այն, խախտել հոգևոր ու ազգային մեր միաբանությունը: Եվ ես վստահ եմ, սիրելի բարեպաշտ հայորդիներ, որ ձեր նախանձախնդիր ոգին պատնեշ պիտի դնի նրանց առջև, և նրանք չպիտի կարողանան արմատներ նետել Հայոց պատմական այս հողի մեջ, որ 1700 տարվա քրիստոնեական հավատով է շնչում:*

...Հավատում ենք, սիրելի վանաձորցիներ, որ դուք պիտի շարունակեք ձեր սերը առատորեն դրսևորել դեպի ձեր Հայրը՝ Քրիստոսի Ավետարանն, ու հանդեպ ձեր մայրը՝ որ է Առաքելական մեր սուրբ Եկեղեցին: Արդարև, նրանք ծնողական գուրգուրանքով ու սիրով պահել ու պահպանել են մեզ մեր պատմության բոլոր դժվարությունների ու փորձությունների մեջ, ինչպես ծնողը կպաշտպանի իր զավակին վտանգության մեջ: Ազգը հայոց ապրել է միշտ ապավինած Սուրբ Ավետարանին, ապավինած իր Առաքելական Սուրբ Եկեղեցուն:

. Շարունակեք փարված մնալ մեր Սուրբ Եկեղեցուն, ապավինած մնալ մեր հայրերի Սուրբ Աստծուն, նրանց սուրբ հավատքին, որպեսզի փորձությունները չկարողանան շեղել մեր ճանապարհը, և մենք քայլենք դեպի մեր ազգի ու մեր պետության վաղվա լուսավոր ու պայծառ օրը»,- մասնավորաբար ասաց Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ մաղթելով ժողովրդին, որ Նարեկա Սրբի աղոթքները միշտ ունենա իր շուրթերին, որպեսզի այդ աղոթքները հրաշագործեն մեր կյանքում:

Օծման արարողությունից հետո Ս. Գրիգոր Նարեկացի եկեղեցում մատուցվեց Հայրապետական Ս. Պատարագ: Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ձեռամբ Ս. Հաղորդություն ստացան հարյուրավոր վանաձորցիներ և հյուրեր:

Հավարտ Ս. Պատարագի տեր և տիկ. Սարգիս և Հռութ Բեղնյանների ամուսնության 40-ամյակի առիթով կատարվեց իրենց պսակադրության օրհնության հատուկ կարգ:

Եկեղեցու օծման արարողությանը ներկա էին Հայաստանյան թեմերի առաջնորդներ, Մայր Աթոռի միաբաններ, ԱՄՆ արտակարգ և լիազոր դեսպան Ջ. Էվանսը, Լոռու մարզային և քաղաքային իշխանությունների ներկայացուցիչներ, եկեղեցու օծման առիթով Սփյուռքից Հայաստան ժամանած շուրջ հարյուր ուխտավորներ, հազարավոր վանաձորցիներ:

Հիշարժան այս օրը տիար Սարգիս Բեղնյանին, ի գնահատություն իր ազնիվ բարերարության, Վանաձորի քաղաքային իշխանությունները շնորհեցին Վանաձորի պատվավոր քաղաքացու կոչում:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ